ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

«ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ

Հասցե՝ ԻՍԱԿՈՎ 2

ԷԼ.ՓՈՍՏ:mtaperakan@inbox.ru

«Արմինե Հովհաննիսյան » Ա/Ձ
(հասցե՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23 91Ա
Էլ. փոստ՝ arminehovhan78@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Տափերականի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի և «Արմինե Հովհաննիսյան »Ա/Ձ -ն միջև 11.01.2024թ. կնքված N ՏՄ-ԳՀԱՊՁԲ-24/01 ծածկագրով գնման պայմանագրի և 15.01.2024թ.կնքված համաձայնագրի այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Արմինե Հովհաննիսյան Ա/Ձ պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով տեխնիկական–բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված սննդամթերքի մատակարարումը: Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվում է, որ ապրանքների մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով:

Տափերականի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը էլեկտրոնային փոստի, ինչպես նաև հեռախոսազանգերի միջոցով դիմել է «Արմինե Հովհաննիսյան» Ա/Ձ-ին պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն չեն մատակարարվել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Տափերականի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից համարելով այն լուծված: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 513585 (հինգ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ և 342390 (երեք հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ Վեդու համայնքապետարանի 900425102093 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները (Վեդու համայնքապետարանի

900425102093 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Տափերականի ՍՈՒՀՀՈՍԿ

Տնօրեն՝ Հակոբյան Մարինե